ՍԱԻԴ ՓՈՒՐՇԱՄՍՅԱՆ
SAIED POURSHAMSYAN

# ՋՈՐՋ ԲՈՒՇ ԿՐՏՍԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՇՐՋԱԴԱՐՁԸ ՄԻՋԻՆ ԱՐԵՎԵԼՔԻ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ (2001-2008 թթ.)

Միջին Արևելքի արաբական երկրների կայունության պահպանումը մեծ կարևորություն ունի ԱՄՆ իշխանությունների համար: ԱՄՆ տարածաշրջանային գլխավոր շահերը հետևյալն են՝ նավթի անվտանգ արտահանման ապահովումը Միջին Արևելքից դեպի ԱՄՆ, ներկայություն տարածաշրջանում զինվորական դաշինքների ձևաչափով, արաբա-իսրայելական հակամարտության խաղաղ լուծումը ԱՄՆ-ի նախընտրած տարբերակով: Մինչև 2001 թվականի սեպտեմբերի 11-ի հարձակումները այս շահերը պաշտպանվում էին տարածաշրջանի արևմտամետ ոչ-ժողովրդավարական վարչակարգերի միջոցով և ԱՄՆ-ի հովանավորությամբ, սակայն ահաբեկչական հարձակումներից հետո ամերիկյան քաղաքականության նախագծողները եկան այն եզրակացության, որ ստեղծված նոր պայմաններում այդ շահերը հնարավոր չէ պաշտպանել ոչ-ժողովրդավարական վարչակազմերի միջոցով, և հիմնական փոփոխություններ մտցրին իրենց խոշորամասշտաբ քաղաքականության մեջ: Այս նոր ռազմավարությունը, որը կիրառվեց Ջորջ Բուշ Կրտսերի իշխանության գալու օրերին, հիմնված էր Միջին Արևելքի ժողովրդավարացման սկզբունքի վրա, սակայն իրականացման ընթացքում կրեց բազմաթիվ փոփոխություններ:

Իրականում, Միջին Արևելքում ժողովրդավարական կարգերի ներդրումը երբեք էլ ԱՄՆ իշխանությունների արտաքին քաղաքականության նպատակը չի եղել: Վերջին տասնամյակներում ԱՄՆ-ի կառավարությունների բուն և հիմնական նպատակներն են եղել Միջին Արևելքի կայունության ապահովումը, խաղաղության հաստատումը իր շահերին համընկնող տարբերակով, տարածաշրջանից դեպի արևմտյան շուկաներ նավթի արտահանման ապահովումը, ծայրահեղական և հեղափոխական շարժումների կասեցումը: Մինչև այն պահը, երբ տարածաշրջանի արաբական երկրները աջակցում էին Միացյալ Նահանգներին վերոնշյալ շահերը պահպանելու գործում, ԱՄՆ իշխանությունները շահագրգռված էին այդ վարչակարգերի պահպանմամբ և այնքան էլ ուշադրություն չէին դարձնում այդ երկրներում ժողովրդավարական կարգերի բացակայության հարցին:(1)

Սեպտեմբեր 11-ի ահաբեկչությունը խոր ազդեցություն թողեց ԱՄՆ արտաքին, հատկապես, միջիևարևելյան քաղաքականության վրա: Այն

ԱՄՆ ղեկավարներին զգուշացրեց, որ Միջին Արևելքի առկա իրավիճակի պաշտպանումը ինչպիսի սարսափելի հետևանքներ կարող է ունենալ այդ երկրի համար: Այս համատեքստում բազմապիսի քննարկումներ ու կարծիքներ արծարծվեցին ծայրահեղական շարժումների ծավալվելու և հակաամերիկյան տրամադրությունների սրման պատճառների վերաբերյալ: Արևմտյան վերլուծաբանները սեպտեմբերի 11-ի իրադարձության արմատները և դրդապատճառները փորձում էին բացատրել միջինարևելյան արաբական հասարակությունների մեջ տնտեսական շանսերի բացակայության, այդ երկրների կրթական համակարգերի անարդյունավետ գործունեության և ԱՄՆ քաղաքականության հանդեպ տարածաշրջանի ժողովուրդների բացասական տրամադրվածության գործոններով:(2)

Ջորջ Բուշ Կրտսերի կառավարության ռազմավարությունը Միջին Արևելքի ժողովրդավարացման (դեմոկրատացման) ուղղությամբ կարող ենք բաժանել երկու որոշակի և առանձին ժամանակափուլերի: 2001-ի սեպտեմբեր 11-ի իրադարձությունից հետո որդեգրված քաղաքականությունը Միացյալ Նահանգների նոր մոտեցման սկիզբն էր Միջին Արևելքի նկատմամբ: Բուշի կառավարությունը եկավ այն եզրակացության, որ տասնամյակներ շարունակ տարածաշրջանի տոտալիտար վարչակարգերի հովանավորումը ոչ միայն կայունություն ու անվտանգություն չբերեց տարածաշրջանին, այլ խթանեց ահաբեկչության տարածմանը:(3)

ԱՄՆ-ի պետքարտուղար Կոնդոլիզա Ռայսն այդ օրերին հարձակումից ընդամենը մեկ շաբաթ անց, կատարեց մի շարք կարևոր հայտարարություններ, որոնք ազդարարեցին վերը նշված փոփոխությունների մեկնարկը: Մասնակցելով մամլո ասուլիսին, նա հայտնեց. «Մեր արժեքները արտասահմանում կարևոր են մեզ համար: Մենք չենք դադարեցնի մեր կողմից կարևոր համարվող հարցերի արծարծումը: Մենք հաստատակամ ենք ավելացնել ճնշումները հանուն մարդու իրավունքների, խղճի ազատության և այլ արժեքների»:(4) ԱՄՆ-ի պետական այլ ղեկավարները ևս ընդգծեցին մարդու իրավունքների և ժողովրդավարության կարևորությունը այդ երկրի քաղաքականության մեջ: Ջորջ Բուշ Կրտսերը 2002 թ. հունվարին ՄԱԿ-ի վեհաժողովում ունեցած իր ելույթում հստակորեն հայտարարեց, որ ահաբեկչության դեմ տարվող պայքարի գլխավոր առանցքը կազմում են ժողովրդավարությունն ու մարդու իրավունքները: Նա խոսեց «Չարիքի առանցքի» մասին և հայտարարեց. «Ամերիկայի Միացյալ Նահանգները միշտ կմնա մարդկային արժանապատվության պաշտպանը օրենքի գերակայության, պետության լիազորությունների սահմանափակման, կանանց նկատմամբ հարգանքի, սեփականության իրավունքի, խոսքի և խղճի ազատության, օրենքի առջև հավասարության սկզբունքների

պաշտպանը: Ամերիկան կանգնած է այս օրենքների համար պայքարող քաջ այրերի և կանանց կողքին, աշխարհի բոլոր կողմերում ու նաև իսլամական երկրներում»: (5) Սա առաջին անգամն էր որ Միացյալ Նահանգների որևէ նախագահ խոսում էր մարդու իրավունքների համար կիրառվող այդպիսի քաղաքականության մասին այն էլ ուղղակիորեն դիմելով իսլամական աշխարհին: Պետական համապատասխան ենթակառույցները ինչպես «Միջին Արևելքի գործերի վարչությունը» և «Ժողովրդավարության հարցերի կառավարման, մարդու իրավունքների պաշտպանության վարչությունը» պաշտոնապես և լիջորեն լծվեցին Բուշի խոսքերի գործադրմանը: Այս երկու կառույցները 2002 թվականին շուրջ 29 միլիոն դոլար հատկացրին Միջին Արևելքում ժողովրդավարության ներդրման ու խթանման աշխատանքներին:(6) Բուշի ռազմավարության առաջին փուլում, որն սկսվեց անմիջապես սեպտեմբերյան ահաբեկչությունից հետո, Միացյալ Նահանգները զինվորական լայն գործողություններ ծավալեց «Չարիքի առանցքի» մեջ մտնող երկրների դեմ, նախ հարձակվեց Աֆղանստանի և ապա 2003-ին Իրաքի վրա գրավելով այդ երկրները: Այնուհետև սկսեց զինվորական ուժի միջոցով փոխել այդ երկրների քաղաքական համակարգը և ժողովրդավարական հիմունքների վրա կառուցել նոր համակարգ, ներգրավելով քաղաքական բոլոր ակտիվ ուժերին, բոլոր կրոնական հոսանքներին ու ցեղախմբերին, դրա հետ մեկտեղ կործանելով բոլոր հակառակորդ թշնամիներին:

Զինվորական գործողությունների նախագիծը, սակայն, նկատի առնելով իր տնտեսական ու մարդկային չափազանց մեծ ծախսերը, չէր կարող գործադրվեր ամենուրեք: Մյուս կողմից, ԱՄՆ-ի զինվորական ընդհարումները Աֆղանստանում և Իրաքում բորբոքում էին տեղի ժողովուրդների թշնամական կրքերն ԱՄՆ-ի և նրա վարած դեմոկրատացման ծրագրերի դեմ: ԱՄՆ-ն սկսեց այլ ուղիներ փնտրել միջինարևելյան իր նոր ռազմավարության գործադրման համար, քանի որ նախորդ տասնամյակների փորձն էլ ցույց էր տալիս, որ դեմոկրատացված երկրներից 80-ը առանց ԱՄՆ-ի զինվորական միջամտության էին ընտրել այդ ուղին, և միայն 5 երկրներ՝ Իրաքը, Աֆղանստանը, Սերբիան, Պանաման և Գրանադան այդ գործընթացի մեջ էին դրվել Միացյալ Նահանգների զինվորական ուղղակի միջամտության արդյունքում: (7)

Չպետք է մոռանալ նաև, որ գրավված երկու երկրներում Աֆղանստանում և Իրաքում կայունության ու անվտանգության հաստատումը լուրջ խոչընդոտների հանդիպեց: Նկատի առնելով վերը նշված հանգամանքները, Միացյալ Նահանգները զինվորական միջամտությունների կողքին առաջադրեց Մեծ Մերձավոր Արևելքի նախագիծը, որպես Միջին Արևել-

քում ժողովրդավարության հաստատման երրորդ ճանապարհ: Այս նախագիծը փորձում էր ժողովրդավարական սկզբունքների (քաղաքացիական իրավունքներ, կանանց իրավունքներ, ոչ-պետական կառույցների հովանավորում, աջակցություն անկախ ԶԼՄ-ներին, օրենքի գերակայություն, խորհրդարանի դերի մեծացում և այլն) ներդրմամբ ու արմատավորմամբ ստեղծել նոր Միջին Արևելք: Այս ուղղությամբ Բուշը կյանքի կոչեց մի շարք կառույցներ, որոնք տարածաշրջանի երկրների համագործակցությամբ լծվեցին այդ նպատակների իրականացմանը: Չնայած, արաբական որոշ երկրների ղեկավարներ համոզված էին, որ ժողովրդավարությունը հնարավոր չէ իրագործել դրսից թելադրված և ստիպողական ծրագրերով, սակայն հակառակ իրենց դժկամության համագործակցեցին այդ ծրագրերին:(8)

Մեծ Մերձավոր Արևելք նախագծի շրջանակներում ձևավորվեցին բազմաթիվ քայլեր երեք ուղղությամբ ժողովրդավարության ընդլայնում, գիտելիքակենտրոն հասարակության ձևավորում և տնտեսական շանսերի ստեղծում: Մեծ ութնյակի երկրները «Ապագա» անունը կրող նախագծի շրջանակում պարբերաբար հանդիպումներ էին կազմակերպում տարածաշրջանի երկների հետ և մանրամասն քննարկում հասարակական-քաղաքական ու տնտեսական բարեփոխումների, հատկապես, օրենքի գերակայության, ժողովրդավարության ընդլայնման, քաղաքացիական հասարակության ինստիտուտների կայացման և մարդու իրավունքների խնդիրները: Դրան զուգընթաց, ութնյակի երկրները ուղղակի կապեր ու համագործակցություններ հաստատեցին տարածաշրջանի երկրների ոչ-պետական կառույցների և տնտեսական խմբերի հետ: (9)

Միջինարևելյան երկրները սեփական պատկերացումներն ու փորձն ունեին իրենց քաղաքական համակարգի ազատականացման հարցում, սակայն Բուշի կառավարությունը խորքային ու արմատական փոփոխությունների էր ձգտում այս ուղղությամբ հովանավորելով ու քաջալերելով տարածաշրջանի ոչ-պետական կառույցներին (NGOs): Ոչ պետական այդ կառույցները հանդես էին գալիս ԱՄՆ-ի ժողովրդավարացման ծրագրերի գործընկերի կարգով, իսկ այդ երկրներում աշխատող ամերիկացի դիվանագետները ժողովրդավարացման գործընթացների խթանողի դերում: Այս ռազմավարությունն անցյալում էլ լավ արդյունքներ էր տվել:

2002 թվականին ժողովրդավարացման գործընթացները խթանելու նպատակով կյանքի կոչվեց MEPI (Middle East Partnership Initiiative) կառույցը: ԱՄՆ-ի պետդեպարտամենտի խոսնակը այդ մասին հայտնեց. «Միջին Արևելքում իրականացվող յուրքանչյուր մեթոդ և քաղաքականություն առանց քաղաքա-տնտեսական և կրթական կողմերը հաշվի առնելու, նման է ավազի վրա կառուցված շենքի»:(10) Հենց այս պատճառով MEPI-ի բյուջեի

գլխավոր մասը հատկացվում է ժողովրդավարացման խթանման, հասարակական լայն քննարկումների համար ազատ միջավայրի ստեղծման, ազատ մամուլի հովանավորման և օրենքի գերակայության աշխատանքներին: MEPI-ը նաև հետապնդում է կանանց իրավունքների և նրանց հասարակական ներգրավվածության բարձրացման նպատակը: MEPI-ի տրամադրած ֆինանսական աջակցությունները գլխավորապես ուղղված են քաղաքացիական հասարակության ինստիտուտների կայացման, դատաիրավական համակարգի բարեփոխման, ԶԼՄ-ների հովանավորության և կանանց իրավունքների պաշտպանության ծրագրերին: MEPI-ն իր ծրագրերի արդյունավետությունը փորձարկելու և գնահատելու համար դիտորդական առաքելություն կատարեց Հորդանանի և Եմենի պառլամենտական ընտրություններում: Սկզբնական փուլում տարածաշրջանային պետությունները ընդառաջում էին այդ քայլերը և շահագրգռվում ժողովրդավարացման գործընթացներով: Այս ուղղությամբ կատարվեցին նաև երկարաժամկետ քայլեր, օրինակ գերազանցիկ ուսանողներին ԱՄՆ-ի բարձրակարգ բուհերում կրթության հնարավորության ընձեռումը:(11) Կամ ասենք աջակցություն Մարակկոյի վերջին խորհրդարանական ընտրությունների կայացմանը և դատաիրվական համակարգի բարեփոխումներին: (12) Սրանք հիմնարար ու խորքային փոփոխություններ էին ժողովրդավարական ինստիտուտների կայացման ուղղությամբ:

Բացի վերոնշյալ քայլերից, Միացյալ Նահանգները որոշ չափով փոխեց իր վերաբերմունքը տարածաշրջանի դաշնակից իշխանությունների, հատկապես, Եգիպտոսի նկատմամբ:(13) Խոսքը վերաբերում է պետքարտուղար Կոնդոլիզա Ռայսի կողմից 2005 թ. հունվարին Եգիպտոս կատարվելիք ճամբորդության հետաձգմանը, որը կատարվեց ի բողոք նախագահական ընտրությունների թեկնածու Այման Նուրիի ձերբակալության: (14) Ռայսի այս քայլը կարմիր քարտ էր Եգիպտոսի նախագահ Հոսնի Մոբարաքին և կանաչ ազդալույս ժողովրդավարության համար պայքարող եգիպտական ուժերին: Այդ քայլը մեծ խանդավառություն առաջացրեց Նուրիի կողմնակիցների շարքերում: Կոնդոլիզա Ռայսը Եգիպտոսի ամերիկյան համալսարանում ունեցած իր ելույթում ասաց. «Եգիպտոսի իշխանությունները պետք է կատարեն սեփական ժողովրդին և ամբողջ աշխարհին տված խոստումները իրենց քաղաքացիներին ազատություններ և ընտրությունների իրավունք տալու կապակցությամբ: Եգիպտոսի ընտությունները, այդ թվում նաև խորհրդարանական ընտությունները պետք է իրագործվեն միջազգային չափանիշներին համապատասխան և միջազգային դիտորդների վերահսկողությամբ, որպեսզի ազատ ընտրություններ կոչվեն: Ընդդիմադիր խմբերը պետք է ունենան իրենց ազատ միությունները և քաղա-

քական լայն մասնակցության հնարավորություն, կարողանան ազատորեն բանավիճել և ունենալ ազատ մամուլ։ Քվեարկությունը պետք է կատարվի առանց ճնշման, բռնության և սպառնալիքի գործադրման, իսկ միջազգային դիտորդներն ու այլ վկաներն ի վիճակի լինեն ամբողջովին ազատորեն կատարել իրենց պարտականությունները»։ (15)

Տարածաշրջանի ժողովրդավարացման դոկտրինի հակառակորդները այն կարծիքի են, որ ԱՄՆ-ի բանեցրած ճնշումները, իրականում, հակառակ ազդեցությունն են թողնում, և դրա վառ օրինակը համարում են Եգիպտոսը, որի պաշտոնական դեկավարները ինչ-որ տեղ դժգոհ են իրենց ներքին գործերում ԱՄՆ իշխանությունների միջամտություններից։ Անշուշտ, ԱՄՆ ճնշումները տալիս են իրենց պտուղները։ Ընդդիմադիր կուսակցությունների դեկավարները այն կարծիքի են, որ այդ ճնշումների շնորհիվ Եգիպտոսի հիմնական օրենքում դրական բարեփոխումներ են կատարվել և հաստատվել են բազմաթեկնածուական ընտրություններ։ Դրական արդյունքներ են տվել նաև ընտրություններում տեղական դիտորդ խմբերի և անկախ դատավորների ներկայության ծրագրերը։ (16) Մյուս կողմից նախորդ տասնամյակներում շատ բարձր արդյունքներ են արձանագրել USAID ծրագրերի շրջանակներում իրականացվող ծրագրերը։ Սկզբում USAID-ի ծրագրերի իրականացման համար Եգիպտոսի կառավարության համագործակցությունն էր պահանջվում, սակայն հետագայի օգնությունները առանց Եգիպտոսի կառավարության համագործակցության ուղղակի տրամադրվում էին եգիպտական այն ոչ-պետական կազմակերպություններին, որոնք ժողովրդավարացման ընդլայնման ուղղությամբ էին աշխատում։ 2005-ի գարնանը եգիպտական NGOs կազմակերպություններից մեկին տրվեց 1 միլիոն դոլար արժողությամբ օգնություն։ (17)

2005 թ. հունվարի 20-ին Ջորջ Բուշն իր նախագահության երկրորդ շրջանում էլ կրկին վերահաստատեց ԱՄՆ-ի հանձն առած պարտավորությունները Ամերիկայից դուրս ազատությունների ընդլայնման ուղղությամբ և շեշտեց. «Բոլոր նրանք, ովքեր ապրում են տոտալիտար երկրներում և կտրել են իրենց հույսերը, թող իմանան, որ Միացյալ Նահանգները երբեք չի անտեսում նրանց վրա եկող ճնշումները։ Երբ դուք կանգնեք ձեր ազատության համար, մենք էլ ձեր կողքին ենք լինելու»։(18) Սակայն ընդամենը մեկ տարի հետո Բուշի կառավարությունը չարձագանքեց նախագահության ընտրությունների թեկնածու Այման Նուրիի անհիմն ձերբակալության փաստին։ 2006-ին, երբ Եգիպտոսի անվտանգության ուժերը ջախջախեցին ժողովրդի բողոքի ցույցերը՝ ի պաշտպանություն ընտրակեղծիքները բացահայտող երկու անկախ դատավորների, կրկին Ռայսը ոչ մի դատապարտող խոսք չասաց։ Վաշինգտոնը լուռ մնաց նաև Մոբարաքի կողմից քաղաքա-

պետերի ընտրությունների կրճատման փաստի հանդեպ։(19) 2006-ի հոկտեմբերի 3-ին Ռայսը Եգիպտոսի արտգործնախարարի հետ մասնակցեց մամլո ասուլիսի, սակայն ոչ մի ակնարկ չարեց ժողովրդավարության հարցերին։ (20) Եգիպտոսը բացառություն չէր կազմում, Բուշի կառավարությունը նույն վերաբերմունքը ցուցաբերեց տարածաշրջանի այլ երկրների՝ Սաուդյան Արաբիայի, Լիբիայի և Թունիսի բարեփոխիչների հանդեպ։ Սա այն պայմաններում, երբ ընդամենը մեկ ու կես տարի էր անցել ԱՄՆ-ի ժողովրդավարացման գործընթացների խթանման քաղաքականությունից։ Միացյալ Նահանգների այս նահանջի պատճառների մասին շատ է խոսվել և տարբեր տեսակետներ առաջ քաշվել։

2006-ին տարածաշրջանի արաբական երկրներում Բուշի կառավարության ճնշման տակ իրականացված մասամբ ժողովրդավարական ընտրությունների արդյունքները դժգոհ թողեցին Միացյալ Նահանգներին, քանի որ Պաղեստինում իր դիրքերն ամրացրեց «Համաս» շարժումը, Եգիպտոսի ազգային խորհրդարան մուտք գործեցին «Մուսուլման եղբայրներ» շարժման 88 անդամներ, որոնք կազմեցին խորհրդարանական հգոր ընդդիմություն Մուբարաքի պետության դեմ, իսկ Իրաքի ազգային մեջլիսի մանդատների մեծ մասն անցավ այդ երկրի շիաներին, որոնք Միացյալ Նահանգների կարծիքով հովանավորվում են Իրանի կողմից։ Այս բոլորը ԱՄՆ-ին մղեցին թուլացնել իր ճնշումները ժողովրդավարացման իրականացման ուղղությամբ։ Մուբարաքը կրճատեց տեղական ինքնակառավարման ընտրությունները, ձերբակալեց քաղաքական ակտիվիստներին և վերացրեց դատաիրավական համակարգի ինքնուրույնությունը։

Իրաքում էլ իրադարձությունները չընթացան Միացյալ Նահանգների նախընտրած հունով և լուրջ խոչընդոտներ հարուցվեցին Իրաքի պետության կազմավորման ճանապարհին։

Այսպիսով, Ջորջ Բուշի կառավարության ստրատեգիական շրջադարձի հիմնական պատճառը պետք է փնտրել Եգիպտոսի 2005 թվականի երկու ընտրություններում «Մուսուլման եղբայրներ» շարժման, իսկ 2006-ի Պաղեստինի ընտրություններում «Համաս» շարժման հաղթանակի փաստերում։ Իսմայիլ Հանիան իր հաղթանակի առիթով ունեցած ելույթում ասաց. «Մեր պատերազմը միայն սյոնիստ թշնամու դեմ է լինելու»։ (21) Համասի և Հեզբոլլահի հաղթանակը Լիբանանում ԱՄՆ-ի սրտովը չէր, սակայն Ջորջ Բուշը պահանջում էր հարգել ընտրությունների արդյունքները, որպեսզի ապացուցվի ԱՄՆ-ի կողմից ժողովրդավարական արժեքների մեծարումը։ Համասի հաղթությունից հետո, տարածաշրջանի տեսաբանները դժվարանում են հավատալ, որ ժողովրդավարությունը ԱՄՆ-ին հարող ուժերի իշխանության գալու օգտին է վերջանալու։ Ընտրությունների նման արդյունք-

ները Վաշինգտոնին ճգնաժամի մեջ գցեցին: Հովանավորելով ազատ ընտրությունները, նրանք ակնկալում էին սահմանափակել ռադիկալ իսլամականների ազդեցությունը, որը սակայն չարդարացավ: Համասի հաղթանակը շատ վերլուծաբանների մղեց վերանայել իրենց տեսակետները և ԱՄՆ իշխանություններին առաջարկել կրկին վերադառնալ նախկին դոկտրինին և հրաժարվել ժողովրդավարացման նախագծերից: Մինչդեռ տեսաբանների մի մասը կարծում էին, որ «Մուսուլման եղբայրներ» խմբի հաղթանակը արդյունք էր իշխող վարչակարգից հիասթափվելու և ժողովրդական դժգոհության, և քանի որ անցյալում լիբերալ կուսակցությունները բավականաչափ չէին հովանավորվել Միացյալ Նահանգների կողմից, ուստի միակ այլընտրանքը եգիպտացիների համար մնացել էր «Մուսուլման եղբայրները»: Սակայն վերլուծաբանների մի ստվար խումբ էլ այն կարծիքին են, որ Իրաքի, Եգիպտոսի, Լիբանանի և Պաղեստինի ընտրություններում իսլամական շարժումների հաղթանակները լուրջ մարտահրավեր նետեցին ժողովրդավարացման ծրագրերին հանգելով ոչ-լիբերալ ուժերի հզորացմանը և անվտանգության ու անկայունության խախտմանը: Շատ վերլուծաբաններ հայտարարեցին, որ Վաշինգտոնը չկարողացավ հարկ եղած չափով վերահսկել ընտրությունները:(22) Հնչեց տեսակետ, որ իսլամական թեերի հաջողությունները վերոնշյալ երկրների ընտրություններում արդյունք էին այդ երկրների վարչակարգերի կոռումպացված ու անարդյունավետ աշխատանքի և ժողովրդական զանգվածների դժգոհության ու անհուսության, որտեղ միակ լուսավոր կետը մնացել էր իսլամական շարժումը: Օրինակ, Եգիպտոսում իսլամական ուժերի հզորացումը արդյունք է Մորբարաքի իշխանության կողմից ժողովրդավար ու լիբերալ ուժերի շարունակական ճնշման ու սահմանափակման քաղաքականության, մինչդեռ այդ ընթացքին իսլամական ուժերը ունենալով իրենց համախմբման ժողովրդական հենարանները մզկիթները, կարողացել են լայն գործունեություն ծավալել հասարակության տարբեր խավերի մեջ: Պաղեստինում կատարված սոցհարցումներն ապացուցում են, որ Իսրայելի դեմ անհաշտ պայքարի գործոնը բնավ էլ առաջնային դեր չի ունեցել իսլամական ուժերին քվեարկելու հարցում և այդ ազդակը հարցվողների կողմից հինգերորդ տեղն է գրավել: Հարցվողների մեծ մասն իրեց ձայնը տվել են իսլամական ուժերին հիասթափված լինելով սեփական իշխանությունների վարած սոցիալ-տնտեսական քաղաքականությունից և սոցիալական անարդարություններից: (23)

Թվում է, թե Միացյալ Նահանգների քաղաքականության մշակողները այնքան էլ լավ չեն տիրապետում տարածաշրջանի երկրների առանձնահատկություններին և իսլամական ուժերի հզորացման բուն պատճառ-

ներին: Այդ երկրների տոտալիտար ու բռնապետական վարչակարգերը լռեցնում են լիբերալ ուժերին, մինչդեռ միևնույն ժամանակ իսլամամետ հոսանքները մզկիթներում համախմբվում են և մզկիթների ամբիոնից օգտվում սեփական տեսակետները քարոզելու և արմատավորելու նպատակով: Վաշինգտոնը իսլամական ուժերի իշխանության գալու վախից վերապահությամբ է մոտենում իր դաշնակից պետությունների հակաժողովրդավարական քայլերին և աչք փակում նրանց թերությունների վրա, որից և օգտվում են այդ բռնապետական ռեժիմները և էլ ավելի ճնշում լիբերալ ուժերին: ԱՄՆ-ն թերևս ավելի կշահի, եթե իսլամական ուժերի հաղթությունից հետո շարունակի իր ժողովրդավարացման ծրագրերը և նպաստավոր հող պատրաստի լիբերալ հոսանքների հզորացման և իսլամականների հետ մրցակցելու համար:

Նկատի առնելով ստեղծված նոր իրավիճակը, ԱՄՆ-ի կոնգրեսը լուրջ քննադատության տակ առավ Ջորջ Բուշի ժողովրդավարացման խթանման ծրագրերը և Եգիպտոսին հատկացվող մեծածավալ օգնությունների անարդյունավետությունը: Կոնգրեսի որոշ անդամներ, նույնիսկ, հանդես եկան այդ օգնությունների կրճատման առաջարկով, իսկ մի խումբն էլ առաջարկեց օգնությունները հատկացնել միայն ժողովրավարացման գործընթացներին և կրճատել զինվորական ոլորտին տրամադրվող օգնությունները: Եղան առաջարկներ, որպեսզի ուսումնասիրվեն տրամադրված օգնությունների արդյունավետության չափը և բուն նպատակին ծառայելու հանգամանքը: Արդյունքում որոշում կայացվեց շարունակել ոչ-պետական կառույցներին ու կազմակերպություններին տրվող օգնությունները, որը որոշակիորեն բացասական արձագանք ունեցավ տարածաշրջանի երկրների վարչակարգերի մոտ, մյուս կողմից սրեց այդ կառույցների և հայրենի իշխանությունների փոխհարաբերությունները: Օրինակ, Եգիպտոսի նախագահ Հոսնի Մուբարաքը, դժգոհ լինելով ԱՄՆ-ի մոտեցումներից, 5 տարի դադարցրեց իր ուղևորությունները դեպի ԱՄՆ:

Եզրակացություն - Չնայաց բոլոր վայրիվերումներին, ժողովրդավարության գործընթացները Միջին Արևելքում արմատավորվելու հնարավորություններ ունեն: Մինչև 2001 թվականի սեպտեմբերի 11-ը տարածաշրջանում տեղի էին ունեցել բազմաթիվ տեղաշարժեր, տարածաշրջանը այժմ ևս շարունակում է արագ տեմպերով փոխվել և առաջընթաց արձանագրել: Այժմ արդեն Քուվեյթում կանայք քվեարկելու իրավունք ունեն, Եգիպտոսում միջազգային դիտորդները կարող են վերահսկել բազմակուսակցական ընտրությունների ընթացքը, Լիբանանում ժողովրդական զանգվածների ճնշմամբ Սիրիան դուրս է բերում իր ուժերը Լիբանանից և Աֆղանստանում երեք տասնամյակից հետո տեղի է ունենում առաջին

խորհրդարանական ընտրությունները: Միջին Արևելքի արաբական երկրներից յուրաքանչյուրը մի քանի տասնամյակ շարունակ ունեցել են ոչ-ժողովրդավարական իշխանություններ, որոնք մշտապես ոտնահարել են իրենց քաղաքացիների իրավունքները և ճնշել իրենց շահերին հակադրվող յուրաքանչյուր բարեփոխիչ քայլ: Սամուել Հանթինգտոնը այն կարծիքի է, որ իսլամական աշխարհը չունի ժողովրդավարացման անցնելու անհրաժեշտ բազա և ենթահող: Նրա կարծիքով, իսլամական աշխարհում, հատկապես, միջինարևելյան երկրներում ժողովրդավարացման շանսերը փոքր են և դրա հիմնական պատճառներից մեկը այդ երկրներում աղքատության բարձր ցուցանիշներն են:

Անկախ նրանից, թե ովքեր են Սպիտակ տան ղեկավարները՝ հանրապետականները կամ դեմոկրատները, նրանց հիմնական ուշադրությունը կենտրոնացված է Միջին Արևելքում խորքային փոփոխություններ և ինստիտուցիոնալ բարեփոխումներ առաջացնելու գործին: Քաղաքացիական առավել թույլ հասարակություն ունեցող երկրներում, ինչպիսիք են Լիբիան, Սիրիան և Թունիսը, շեշտը դնում են տնտեսական-հասարակական զարգացման վրա, որպեսզի այդ հիմքի վրա ձևավորվի քաղաքացիական հասարակությունը:

Տարածաշրջանի բարեփոխիչները, ինչպես օրինակ Սա՛ադեդդին Իբրահիմը Եգիպտոսում(25), ով նախորդ տասնամյակում շատ քիչ հույսեր էր կապում բարեփոխումներին, այժմ վերանայել է իր կարծիքը և բարեփոխումները համարում է հասանելի և իրագործելի: 2001-ից առաջ բարեփոխումները շատ փոքր ծավալներ էին կրում տարածաշրջանում և ավելի մեծ թիվ էին կազմում բռնապետական կարգեր ունեցող երկրները՝ Օմանը, Քուվեյթը, Բահրեյնը և Մարակկոն:

Միջին Արևելքի երկրների ազատականացումը հնարավոր է խթանել ժողովրդավարության կողմնակից ուժերի հովանավորմամբ: Այժմ ավելի փոքր թիվ են կազմում չափազանց խիստ բռնապետական կարգեր ունեցող երկրները: Այստեղ մեծ դեր կարող է խաղալ ԱՄՆ-ի կողմից նոր ձևավորվող ժողովրդավարական ուժերին աջակցելը, որպեսզի նրանք հարատևեն ու չմարեն: Ոչ թե Ջորջ Բուշ Կրտսերը, այլ նրա որդեգրած քաղաքականությունը ծնեցին բարեփոխիչներին: Այժմ ժողովրդավարական բարեփոխումներից խոսելը տաբու չէ տարածաշրջանում: Ջորջ Բուշի միջինարևելյան ժողովրդավարացման գործընթացներից 7 տարի անցնելով, դժվար է կրկին վերադառնալ նախորդ էտապին և հրաժարվել Միջին Արևելքի ժողովրդավարացման քաղաքականությունից՝ այս տարածաշրջանն ընկալելով իբրև ժողովրդավարության օրինաչափությունների բացառություն:

Գրականության ցանկ

1-Philip H. Gordon," Bush's Middle East Vision,"Survival, Vol. 4,No 1,Spring 2003;Reprinted at : www.bruk.edu.

2-Amy hawthorn," Can the United States Promote Democracy in the middle East, " *Current History* , January 2003,p.21:Reprinted at :www.ceip.org.p22

" Middle East: Promoting Democracy, Council on Foreign Why Was MEPI Established?3- " Relations, Oct. 10, 2003.

4- Condoleezza Rice, national security adviser, news briefing, Washington, D.C., Sept. 19, 2001. address, Washington, D.C., Jan. 29, 2002.2002 State of the Union5- President George W. Bush,

" U.S. Department of State: Office of the U.S.-Middle East Partnership Initiative Fact Sheet6- " Spokesman, Dec. 12, 2002.

7-"Country Report 2005: Panama", Freedom in the World (Washington, D.C.: Freedom House, 2005), accessed Apr. 6, 2006

8- "Mubarak: Democracy in the Arab World Can't Be Imposed from Outside," USA Today, Mar. 13, 2005.

9- www.did . ir /doc/index

Building Hope for the Years 10-Colin .L. Powell, "The U.S.-Middle East Partnership Initiative:

" speech to The Heritage Foundation, Washington, D.C., Dec. 12, 2002.Ahead

, *July 14, 2004.Purdue News*11-*Middle East Students Learn about America in the Mid-West,"*

Program Descriptions for Fiscal 2002," U.S. Department U.S.-Middle East Partnership Initiative12-

of State: Office of the Spokesman, July 14, 2003.

13- Richard Haass, "Toward Greater Democracy in the Muslim World," The Washington Quarterly, Summer 2000, p. 146.

14- Based on discussions with Nour's supporters in Egypt, Jan. 2005.

June 20. 15-Condoleezza Rice, secretary of state, speech at the American University in Cairo, Egypt, .2005

, August 15-2005 Presidential Election Assessment in Egypt16-"International Republican Institute, September 9, 2005," International Republican Institute, Washington, D.C.

: How Free? How Important?" The 2005 Egyptian Elections17- Tamara Cofman Wittes, "The Brookings Institution, Saban Center Middle East Memo no. 8, Aug. 24, 2005.

18- President Sworn-In to Second Term." Office of the Press Secretary. The White House. January 20, 2005

19-Jeffrey Azarva. "Reneging on Reform: Egypt and Tunisia." Middle East Outlook, April 2007. http://www.aei.org

20- Condoleezza Rice. "Remarks with Egyptian Foreign Minister Ahmed Aboul Gheit after their http://www.state.gov/secretary/rm/2006Meeting." U.S. Department of State. October 3, 2006.

21-"Hamas calls for international pressure on Israel." Agence France Presse, January 26, 2006.

22- Larry Diamond, Squandered Victory: The American Occupation and the Bungled Effort to Bring Democracy to Iraq (New York: Henry Holt & Co., 2005), p. 304.

23-Birzeit University and Development Studies Programmed : Palestinian Legislative Council

" International Republican Institute, Jan. 25, 2006.no. 20Elections Poll Results,

24-Michele Dunne , Washington Post,August17.2009

25- Ibn Khaldun Center for Development Studies' website at http://www.ercds.org

," Middle East Quarterly, Dec. 2000, pp. 3-12.Want Democracy? Get a King26- Owen H. Kirby, "

Saied Pourshamsyan- the George Bush administration's strategy deviation in президентства Буша начался с атаки на двух стран Афганистан, Ирак, и давление на других арабс.